

07.10.2010

ՀՀ փոխվարչապետը ողջունեց ապակենտրոնացված համագործակցության հայ-Ֆրանսիական համաժողովի անցկացումը

Երեւանում այսօր աշխատանքներն սկսեց ապակենտրոնացված համագործակցության հայ-Ֆրանսիական համաժողովը, որի բացման արարողությանը ներկա էր եւ ելոյթով հանդես եկավ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեորգյանը: Համաժողովի անցկացումը ողջունեցին նաեւ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը, Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Սերժ Սմետովը, Երեւանի եւ Լիոնի քաղաքապետները: Համաժողովին մասնակցելու եւ հայ գործընկերների հետ համագործակցության խորացման հարցեր քննարկելու նպատակով Հայաստան են ժամանել 130 պատվիրակներ՝ Ֆրանսիայի տարբեր շրջաններից ու դեսպարտամենտներից եւ մոտ երկու տասնյակ քաղաքներից: Հյուրերի թվում են նաեւ Ֆրանսիայի արտաքին եւ եվրոպական հարցերի նախարարության, Ֆրանսիայի միավորված քաղաքների միության եւ Ֆրանսիայի քաղաքապետների ասոցիացիայի ներկայացուցիչները: Երկօրյա համաժողովի ընթացքում կքննարկվեն մասնավորապես ապակենտրոնացված համագործակցության մեջ տեղական ինքնակառավարման դերին, ապակենտրոնացված համագործակցությանը եւ տնտեսական զարգացմանը, Հայաստանում ֆրանսերենի ուսուցմանը, հայ-Ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության խորացմանն ու զարգացմանը վերաբերող հարցեր: Համաժողովի աշխատանքների ավարտին նախատեսվում է հայ-Ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության խարտիայի ընդունում:

ՏԿՆ հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեորգյանի ելոյթը՝ ապակենտրոնացված համագործակցության հայ-Ֆրանսիական համաժողովի ընթացքում

Համաժողովի հարգելի մասնակիցներ,

Հարգելի հյուրեր

Նախ եւ առաջ, ուզում եմ բարի գալուստ մաղթել Ֆրանսիայից ժամանած մեր բարեկամներին:

Հայ ժողովուրդն առանձնակի ջերմ ու զգայական վերաբերմունք ունի Ֆրանսիայի ու ֆրանսիացիների նկատմամբ: Հայ-Ֆրանսիական բարեկամությունը մեր մշակույթի ու հոգեւոր կյանքի ամենաարժեքավոր հյուսվածքներից է:

Մենք երախտապարտ ենք Ֆրանսիայի ժողովրդին պատմության բոլոր դժվար պահերին ցույց տրված անշահախնդիր աջակցության համար: Միաժամանակ ուրախ ենք, որ մեր ժողովուրդների բարեկամությունը տարեցտարի զարգանում է՝ տարածվելով եւ նոր որակներ ստանալով մեր կյանքի տարբեր ոլորտներում:

Այդ զարգացումների տրամաբանական շարունակությունն է նաեւ այս համաժողովը, որը ոչ միայն արդյունք է մինչ այս արված մեր աշխատանքների, այլեւ սկիզբ՝ նոր որակի ու բովանդակությամբ համագործակցության:

Հայ-Ֆրանսիական քաղաքների առաջին մի քանի համագործակցությունները ձեռնարկվել են դեռևս Հայաստանի անկախացումից առաջ, սակայն դրանք իրական թափ ու զարգացում են ապրել անկախ Հայաստանի օրոք՝ հատկապես 1996թ. տեղական ինքնակառավարման ներկայիս համակարգի ներդրումից հետո:

Այդ պահից սկսած մենք ունեցանք, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի սկզբունքներին համապատասխան տեղական իշխանություններ: Հայաստանում տեղական ինքնակառավարման ներկայիս համակարգը 14 տարվա փորձ ունի: Մենք շարունակում ենք օրենսդրորեն ամրապնդել տեղական ինքնակառավարման հիմքերը Հայաստանում:

Այս ուղղությամբ վերջին տարիներին իրականացված փոփոխությունների կիզակետը 2005 թվականի վերջում իրականացված ՀՀ Սահմանադրության փոփոխություններն էին՝ որոնք վերաբերում էին նաև տեղական ինքնակառավարման համակարգին: Երեւանը սահմանվեց որպես համայնք, ու Երեւանում անցկացվեցին համայնքային ընտրություններ: Արդյունքում ունենք անընդհատ ամրապնդվող համայնքներ, որոնք աստիճանաբար վերածում են հետաքրքիր ու հեռանկարային գործընկերների:

Ապակենտրոնացման քաղաքականությունն այսօր էլ մնում է ՀՀ կառավարության օրակարգում, մենք Եվրոպայի խորհրդի հետ սերտ համագործակցությամբ մշակում ենք ապակենտրոնացման հետագա քայլերի գործողությունների պլան՝ առաջիկա երեք տարիների համար:

Պատահական չէ, որ այս համաժողովի աշխատախմբերից մեկի թեման հենց ապակենտրոնացման հարցն է: Միայն ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՄՐԱՊԵՆԴՎԱԾ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ ԵՆ ԿԱՐՈՂ ՀԱՎԱՍԱՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԼԻՆԵԼ: Վստահ եմ, որ ձեր համագործակցությունների արդյունքում մենք կունենանք ինստիտուցիոնալ առումով ավելի ու ավելի զարգացած համայնքներ:

Մենք կարելի է ասենք ապակենտրոնացված համագործակցությունների միջոցով փորձի փոխանակումը եւ տեղական իշխանությունների կարողությունների զարգացումը:

Ձեզ հայտնի է, որ Հայաստանի արտաքին քաղաքական հիմնական վեկտորներից մեկը եվրոպական ինտեգրացիան է: Այդ գործընթացները չեն կարող ընթանալ միայն կառավարությունների կամ մի քանի կազմակերպությունների միջև:

Եվրոպական երկրներից Ֆրանսիայի համայնքների հետ Հայաստանի համայնքների համագործակցություններն ամենազանգվածայինն են: Ուստի Ֆրանսիայի ու Հայաստանի համայնքների ու մարզերի համագործակցությունները նաև այս առումով ունեն ռազմավարական նշանակություն:

Հատկանշական է, որ մի քանի օր առաջ մենք հյուրընկալեցինք Եվրոպական ռեգիոնների ասամբլեայի նախագահ տկն Միշել Սաբանի գլխավորած պատվիրակությանը, կազմակերպություն, որին անդամակցում են Ֆրանսիայի 19 ռեգիոններ, որոնցից շատերը ներկայացված են նաև այստեղ: Մենք սկսել ենք մի գործընթաց, որի արդյունքում, ամենայն

հավանականությամբ, Հայաստանի մարզերը կանդամակցեն այս կազմակերպությանը: Սա եւս մի լրացուցիչ հնարավորություն է ընդլայնելու մեր համագործակցության ծավալն ու ընդգրկումը:

Փաստ է, որ Հայաստանի եւ Ֆրանսիայի մարզերի ու համայնքների համագործակցությունը տարեց տարի ընդարձակվում է թե իր աշխարհագրությամբ, թե բովանդակությամբ: Եթե առաջին տարիների համագործակցության հիմնական առարկան օժանդակությունն էր պատերազմից ու ավերիչ երկրաշարժից հետո սոցիալական ու տնտեսական ծանր վիճակում

հայտնված Հայաստանին, ապա այսօր մեր համայնքների համագործակցությունները գերազանցապես փոխադարձ հետաքրքրություն ունեցող ծրագրերի շուրջ են:

Առանձնահատուկ ուզում եմ նշել Ֆրանսիայի Ռիոն Ալպ ռեգիոնի եւ Հայաստանի համայնքների ասոցիացիայի համագործակցությունը, որի արդյունքում Հայաստանի ռեգիոններում իրականացվում են բազմադերակատար եւ համաֆինանսավորումներով ծրագրեր տարբեր ոլորտներում: Ըստ որում, ծրագրերի ոլորտները հիմնվում են ՀՀ կառավարության առաջնահերթությունների ու գերակայությունների վրա: Այս փորձը ցանկալի է տարածել նաեւ այլ մարզերի ու ռեգիոնների վրա:

Տարածքային համաչափ զարգացումը, տնտեսական զարգացումը, գյուղական միջավայրի զարգացումը նույնպես ընդգրկված են մեր համաժողովի թեմատիկայում: Կցանկանայի երախտագիտությամբ նշել Ֆրանսիայի Օ դը Սեն նահանգի մեր բարեկամների, հատկապես պրն Դեվեջանի հետ համագործակցությունը՝ Հայաստան՝ համահայկական հիմնադրամի շրջանակում, որի արդյունքում Տավուշի մարզի մի շարք գյուղական համայնքներում իրականացվեցին տնտեսական կայուն զարգացմանը միտված մի ամբողջ շարք արդյունավետ ծրագրեր:

Նշված թեմաները եւ ուղղությունները ՀՀ կառավարության գերակայություններից են, ուստի դուք կարող եք ապավինել Հայաստանի կառավարության լիարժեք աջակցությանն ու գործընկերությանը:

Հայ-ֆրանսիական ապակետրոնացված համագործակցությունը տեղի է ունենում տեղական իշխանությունների միջեւ, սակայն նաեւ այս համաժողովի մասնակցության ֆորմատը վկայում է, որ մասնակից կողմերն ավելի շատ են: Ֆրանսիական քաղաքների հետ ներգրավված են տեղի հայկական կառույցները, մասնագիտական, բիզնես կառույցներ, Հայաստանի քաղաքների հետ աշխատում են տեղական հասարակական կազմակերպություններ, կրթական հաստատություններ, ֆրանկոֆոն կառույցներ, բիզնես կազմակերպություններ:

Սա վկայում է, որ տեղական իշխանությունների միջեւ համագործակցությունը հավակնում է վերածվել հայ-ֆրանսիական դարավոր բարեկամությանը նոր թափ հաղորդող մի հզոր շարժման: Շարժում, որի մասնակիցները նաեւ այս համաժողովի միջոցով ձեւավորում են ընդհանուր նպատակներ, ծրագրում են նպատակային գործողություններ՝ ի բարօրություն մեր ժողովուրդների:

Համաժողովին մաղթում եմ արդյունավետ աշխատանք, իսկ մեր հյուրերին լավ տրամադրություն եւ տպավորություններ Հայաստանում:

Շնորհակալություն: